# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

# MEMORANDUM OF UNDERSTANDING

*Հոկտեմբերի 1, 2012թ.*
*Երևան քաղաք,*
*Հայաստանի Հանրապետություն*

October 1, 2012
Yerevan, Republic of Armenia

**ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ** Հիմնադրամը /հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության 1/21, տարածք 40/ /այսուհետ՝ ԱԳԶԿ Հիմնադրամ/, ի դեմս Հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարդարյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության համաձայն, մի կողմից,
և
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ** Հիմնադրամը /հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ.Մկրտչյան 5Ա/, /այսուհետ՝ ՓՄՁ ԶԱԿ Հիմնադրամ/ ի դեմս Հիմնադրամի գործադիր տնօրեն Վարազդատ Կարապետյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության համաձայն, այսուհետ համատեղ կոչվելով՝ Կողմեր,

This Memorandum of Understanding (hereinafter referred to as the "Memorandum") is entered by and between the **"Center for Agribusiness and Rural Development" Foundation (the "CARD")** represented by its director Gagik Sardaryan, and the **"Small and Medium Entrepreneurship Development National Center of Armenia" Fund** (hereinafter referred to as **"SME DNC"**) represented by its executive director Varazdat Karapetyan, CARD and SME DNC are singularly referred to hereinafter as a "Party", and collectively referred to as the "Parties".

հիմք ընդունելով այն, որ ԱԳԶԿ Հիմնադրամը Շվեցարիայի Զարգացման և Համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ Շվեցարական «Հելվետաս Սվիզ ինտերկորպորեյշն»-ի հետ համատեղ իրականացնում է «Շուկաներ Մեղրիի տարածաշրջանի համար» ծրագիրը, և ՓՄՁ ԶԱԿ Հիմնադրամն աջակցում է ծրագրի նպատակներն և պատրաստակամ է համագործակցել ԱԳԶԿ Հիմնադրամի հետ Ծրագրի իրականացման ընթացքում,

**Whereas** CARD Foundation, jointly with Helvetas Swiss Intercooperation (HSI), implements the project titled "Markets for Meghri" (M4M) funded by the Swiss Development Cooperation (SDC) (hereinafter called Project), and SME DNC supports the project objectives and expresses its willingness to cooperate with CARD during the project implementation;

հաշվի առնելով, որ ԱԳԶԿ Հիմնադրամը Ծրագրի իրականացման ընթացքում սերտորեն համագործակցում է ՓՄՁ ԶԱԿ Հիմնադրամի հետ՝ նպատակ ունենալով նպաստելու աղքատության կրճատմանը Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանում՝ բարձրացնելով ֆերմերների, վերամշակողների և առևտրականների շահութաբերության մակարդակը և դրանով իսկ նպաստելով նրանց աճող և կայուն

**Whereas** CARD Foundation closely cooperates with SME DNC during the project implementation aiming at contributing to poverty reduction in Meghri region of the Syunik marz, by increasing the profit level of farmers, processors and traders, and thus contributing to the growth and sustainability of their incomes.

եկամուտի ստացմանը,

Կողմերը համաձայնվում են հաստատել իրենց համագործակցությունը սույն Յուշագրով ներքոհիշյալ դրույթների շուրջ.

Now, therefore, the Parties agree that the recitals above are incorporated into this Memorandum as if fully set forth below and further agree as follows:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## I.GENERAL PROVISIONS

Սույն Յուշագրի իմաստով Կողմերն ընդունում և արձանագրում են, որ.

With this Memorandum Parties accept and certify that:

1. ԱԳԶԿ Հիմնադրամը Շվեցարիայի Զարգացման և Համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ Շվեցարական «Հելվետաս Սվիս ինտերկոոպորեյշն»-ի հետ համատեղ՝ իրականացնում է«Շուկաներ Մեղրիի տարածաշրջանի համար» ծրագիրը /այսուհետ՝ Ծրագիր/:

1. CARD Foundation, jointly with Helvetas Swiss Intercooperation, implements the M4M Project funded by the Swiss Development Cooperation (SDC) (hereinafter called Project).

2. Ծրագրի գործողության ժամկետը սկսվում է 2012 թվականի դեկտեմբերի 1-ից, իսկ ավարտը՝ 2016 թվականի մայիսի 1:

2. The project will be launched on December 1st, 2012 and is planned to end on May 1st, 2016.

3. Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանում և նպատակաուղղված է լուծելու ֆերմերների, վերամշակողների և առևտրականների խնդիրները՝ մեծացնելով նրանց արտադրական ծավալներն ու եկամտաբերությունը:

3. The Project covers Meghri region of the Syunik Marz, and is aimed at solving the problems farmers, processors and traders encounter by increasing their production volumes and incomes.

4. Ծրագրի հիմնական ակնկալվող արդյունքներն են՝

4. The main expected results of the Project are:

-Ավելացնել ֆերմերների արտադրողականությունը՝ առաջարկելով ծառայությունների փաթեթ, որը կներառի հետևյալ դրույթները՝ դասընթացներ, խորհրդատվություն, վարկերի ստացման և գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերման հնարավորությունների ընձեռում:

- Enhancing productivity through offering a service package of technical assistance - training and consultancy, access to credits and agricultural input to farmers

-Նպաստել ֆերմերների, վերամշակողների և առևտրականների միջև երկարաժամկետ և վստահելի հարաբերությունների ստեղծմանը, որն էլ կապահովի նրանց մուտքը դեպի նոր շուկաներ:

-Contribute to improvement of access to markets for farmers, processors and traders through facilitation of the development of long-term and reliable relationships;

-Պետություն-մասնավոր սեկտոր համագործակցության շնորհիվ ներգրավել նոր ներդրումներ, ինչպես նաև բացահայտել Մեղրիում առկա նոր ներդրումների հնարավորությունները:

- Marketing of investments opportunities existing in Meghri and attraction of private investments through public-private partnership

-Ներգրավված կողմերի կարողությունների հզորացման միջոցով ստեղծել Ծրագրի միջոցով ներդրված մոդելների կայուն զարգացման համակարգ:

- Institutionalization of project facilitated systems (models, mechanisms) through capacity building of involved parties (stakeholders)

## II.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

## II. The Roles and Responsibilities of the Parties

ԱԳԶԿ Հիմնադրամը սույն Հուշագրի սահմաններում.

**Responsibilites of CARD**

5. Իրականացնում է Փոքր և միջին ձեռնարկությունների /ՓՄՁ/ և գյուղացիական տնտեսությունների (Շահառուներ) գործունեության (արտադրական, վերամշակման, շուկայահանման, և այլն) տեխնիկական օժանդակություն:

5. CARD provides technical assistance to Small and Medium Enterprises (SMEs) and farmers (Beneficiaries) in the production, processing, marketing, and etc.

6. Շահառուների համար կազմակերպում է դասընթացներ, ֆինանսավորում ցուցադրական ծրագրեր, տրամադրում տեղեկատվություն շուկաների, ֆինանսական ռեսուրսների հասանելիության և այլ տեղեկատվություն, որը անհարժեշտ է Շահառուների գործունեության զարգացման, աշխատատեղերի ստեղծման և եկամուտների ավելացման համար:

6. CARD organizes seminars, finances demonstrational projects, provides information on markets, access to financial resources and other information necessary  for the development of businesses, for creating jobs and increasing incomes of Beneficiaries.

7. Մեղրիի զարգացման խրախուսման նպատակով կազմակերպում է հանդիպումներ, համաժողովներ, խորհրդակցություններ ՀՀ և արտերկրի գործարար ներկայացուցիչների, կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:

7., CARD organizes meetings, conferences, consultations with the participation of local and foreign business representatives, government and local self-government bodies, and non-governmental organizations to promote the development of Meghri region.

8. Մեղրիի տարածաշրջանում ներդրումների խրախուսման նպատակով տարածում է համապատասխան տեղեկատվություն:

8. CARD disseminates necessary information for promoting investments in Meghri region.

9. ՓՄՁ ԶԱԿ Հիմնադրամի Մեղրիի ներկայացուցիչին ապահովում է

9. CARD provides the Meghri representative from the SME DNC Fund with an office space, computer and

| | |
|---|---|
| աշխատանքային տարածքով, համակարգչով և աշխատանքի համար անհրաժեշտ այլ պայմաններով: | other necessary working conditions. |
| 10. Աջակցում է ՓՄՁ ԶԱԿ Հիմնադրամի երաշխավորությամբ ՓՄՁ-ների վարկերի տրամադրման գործընթացներին: | 10. CARD supports the lending process to SMEs that are guaranteed by the SME DNC Fund. |
| **ՓՄՁ ԶԱԿ Հիմնադրամը սույն Հուշագրի սահմաններում.** | **Responsibilities of SME DNC Fund** |
| 11. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» Հիմնադրամի հետ համագործակցելով իրականացնում է ձեռներեցության զարգացմանը ուղղված գործունեություն՝ մասնավորապես, բայց ոչ սահմանափակվելով – ձեռներեցության զարգացման դասընթացներ և խորհրդատվություն, տեղեկատվության տրամադրում, և այլն: | 11. SME DNC Fund in cooperation with CARD Foundation implements activities addressed to development of entrepreneurship, particularly, but not limited, provision of seminars and consultation on enterprise development, provision of information and etc. |
| 12. Մեղրիի տարածաշրջանում ներդրումների խրախուսման նպատակով տարածում է համապատասխան տեղեկատվություն: | 12. SME DNC disseminates information for promoting investments in Meghri region. |
| 13. Մասնակցում է Մեղրիի զարգացման խրախուսման նպատակով կազմակերպվող հանդիպումներին, համաժողովներին, խորհրդակցություններին: | 13. SME DNC participates in the meetings, conferences, consultations organized for the development of Meghri region. |
| 14. Ծրագրի գրասենյակում աշխատելու և Ծրագրի հետ առավել արդյունավետ համագործակցելու նպատակով նշանակում է «Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» Հիմնադրամի ներկայացուցիչ Մեղրիում: | 14. A representative is appointed from SME DNC Fund to work in Meghri office and in this way cooperate more efficiently with the Project. |
| 15. ՓՄՁ ԶԱԿ Հիմնադրամի կողմից ՀՀ-ում իրականացվող ծրագրերի շրջանակներում և պայմաններով տրամադրում է վարկային երաշխիքներ՝ համագործակցելով տարածքում ակտիվ գործող ՈՒՎԿ-ների և բանկերի հետ: | 15. SME DNC, in the framework and terms of the projects implemented in Armenia, provides loan guarantees by cooperating with active Universal Credit Organizations (UCOs) and banks in the region. |
| 16. Նախատեսում է մինչև 2016 թվականը բացել «Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» Հիմնադրամի Մեղրիի տարածաշրջանի գրասենյակ: | 16. It is planned to establish a SME DNC regional office in Meghri by 2016. |

## III.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ, ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

17. Կողմերից յուրաքանչյուրը կարող է տեղեկանալ մյուս կողմի ցանկացած այնպիսի տեղեկատվության, որը ոչ միշտ է հասանելի հանրությանը և ունի որևէ առնչություն սույն Փոխըմբռնման Հուշագրի շրջանակներում իրականացվող կամ մշակվող ծրագրերի հետ:

18. Կողմերից յուրաքանչյուրին արգելվում է բացահայտել մյուս կողմի՝ իրեն հայտնի տեղեկատվությունը՝ առանց տեղեկատվության տեր հանդիսացող կողմի նախորոք գրավոր համաձայնության:

## IV.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19. Սույն Փոխըմբռնման Հուշագիրը կարող է դադարեցվել ցանկացած պահի՝ Կողմերի նախաձեռնությամբ՝ այդ մասին 30 օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

20. Սույն Հուշագրի առարկայի հետ կապված համագործակցող /կոնտակտային/ անձինք են՝

ԱԳԶԿ Հիմնադրամ՝ Գագիկ Սարդարյան
հեռ +374 60 440 550; էլ. հասցե՝ gsardaryan@card.am

ՓՄՁԶԱԿ Հիմնադրամ՝ Անուշ Ասլանյան
հեռ +374 10 541645; էլ. հասցե՝ aaslanyan@smednc.am :

21. Սույն Փոխըմբռնման Հուշագիրը ներառում է Կողմերի բոլոր համաձայնությունները և գերակա է իրեն նախորդող կամ այդ ընթացում առաջացած ցանկացած պայմանների, գործառույթների, սահմանումների կամ սույն Փոխըմբռնման Հուշագրին առնչվող բանավոր և գրավոր համաձայնությունների նկատմամբ:

22. Սույն Փոխըմբռնման Հուշագիրը ուժի մեջ է մտնում կնքման օրվանից և վավերական է մինչև սույն Հուշագրով և/կամ դրանից բխող՝

## III.Sharing Knowledge/Confidentiality

17. Each Party may receive access to certain of another Party's information, of any kind, not generally available to the public and related to the projects being implemented or developed within the framework of this MOU. (The "Confidential Information").

18. Each Party is prohibited from disclosing another Party's Confidential Information unless approved in writing by the Party owning said Confidential Information.

## IV.Miscellaneous

19. This Memorandum may be terminated at any time by any of the Parties for reasons making the implementation of the project impossible upon thirty (30) days' prior written notice.

20. The cooperating (contact) people with respect to the subject matter of this MOU are:

CARD Foundation, Gagik Sardaryan
Tel: +374 60 440 550; email gsardaryan@card.am

SME DNC, Anush Aslanyan
tel:+374 10 541645; email: aaslanyan@smednc.am

21. This Memorandum contains the entire understanding of the Parties with respect to the subject matter contained herein, and supersedes any prior or contemporaneous terms, representations, statements, or agreements, whether made orally or in writing, with respect to the subject matter contained herein.

22. This Memorandum shall become effective as of the Effective Date, and shall expire upon the date when the signing Parties fulfill their obligations and

կնքված պայմանագրերով Կողմերի ստանձնած պարտականությունների և պատրավորությունների կատարման պահը:

commitments as outlined within this Memorandum.

23. Կողմերի վավերապայմանները ու ստորագրությունները.

23. IN WITNESS WHEREOF, the undersigned duly appointed representatives of the Parties signed the Memorandum on the dates indicated below their respective signatures:

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ Հիմնադրամ

Հասցե՝ Երևան, Ազատության 1/21, տարածք 40
Հեռ +374 60 440 550;
Email. gsardaryan@card.am

……………………………………
Գագիկ Սարդարյան
Տնօրեն

1 հոկտեմբեր 2012թ.

**On behalf of the "Center for Agribusiness and Rural Development" (CARD)Foundation**

Address: Azatutyan 1/21, apt 40, Yerevan
Tel: +374 60 440 550

……………………………
Gagik Sardaryan

Director

1 October, 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ Հիմնադրամ

Հասցե՝ Երևան, Մհեր Մկրտչյան 5Ա
Հեռ+374 10 541 645
Email. director@smednc.am

……………………………………
Վարազդատ Կարապետյան
Գործադիր տնօրեն

1 հոկտեմբեր 2012թ.

**On behalf of the "Small and Medium Entrepreneurship Development National Center of Armenia" Fund**

Address: Mher Mkrtchyan 5a, Yerevan
Tel: +374 10 541 645

……………………………………
Varazdat Karapetyan

Executive Director

1 October, 2012